

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուրլ, կէս տարվանը 6 բուրլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:
Օտարաքաղաքացիք գինում են ուղղակի
Тифлисе. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿՈՒՄ 1883 ԹԻՒՆ

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրօգրամայով:

ՊՐՕԳՐԱՄԱ

I. ՏԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ: II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕՒՈՒԱՇՆԵՐ: III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: V. ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ: VI. ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ: VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ֆելիետոն, վեպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ: VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԲԱՍՏԱՆՈՐԱԿԱՆ: Տարեկան 10 բուրլ, վեց ամսվայ 6 բուրլ, խրաքանչիւր ամսվայ 1 բուրլ:
ՀԱՏՈՎ համարները 5 կոպէկ:
ՀԱՍՑԷՆ. Тифлисе, редакция «Мшак»

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆՈՒԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Քաղաքային ընտրութիւններ: Նամակ Ս. Պետերբուրգից: Նամակ Ղազարից: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ֆրանսիա: Նամակ Թիբրիսից: Սրտաքին լուրեր: ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ: ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քաղաքային ընտրութիւնների երկու երրորդական մասը արդէն վերջացած է: Այսօր, նոյեմբերի 21-ին մնում է երրորդ կարգի իրաւասունների ընտրութիւնը: Քաղաքը յանձնելով իր բաղըը 72 իրաւասուններին, մէկ էլ կարող է չորս տարուց յետոյ հանգիստ մի այդպիսի քաղաք: Արդեօք ի՞նչ պիտի նախապատրաստութիւններով, որպիսի նախապահակող միջոցներով հանդիպելնք մենք ներկայ ընտրութիւններին, որպիսի հեռատեսութեամբ, արդարութեամբ և օրինական սահմանով վարվեցանք այս անգամ յանձնելով 100 հազարից աւելի ազգաբնակչութեան հաւատարմութիւնը մի քանի տասնեակ մարդկանց, — այդ երևում է արդէն ընտրած 48 անձինքների ցուցակից և վերջնականապէս կերտւոյ երրորդ կարգի ընտրութիւններից յետոյ: Բայց անհրաժեշտ իրողութիւն է, որ մեր մէջ, քանի որ ժողովրդի ստուար մեծամասնութիւնը չէ հասել ինքնաձեռնադրութեան զգայունքին, քանի որ իւրաքանչիւր քաղաքացի հիմնաւոր կերպով չը գիտէ իր իրաւունքները և պարտականութիւնները դէպի քաղաքը, — մեր մէջ շատ անգամ ընտրութիւնը վայրի վերջ է կատարվում և քուէարկութիւնը մեծ անհողութեամբ և ցուալի վախճան է ունենում: Բայց քաղաքային իրաւասունների ընտրութիւնը արժանի է մեր ամենախորին ուշադրութեան. արդէն այստեղ քաղաքը ընտրում է 72 անձինք, որոնք իրակատար տէրեր են քաղաքի և որոնց ձեռքում է ամփոփված քաղաքի անտեսական և բարոյական վիճակը: Մեր բոլոր անհատական և

թէ հասարակական սեպականութիւնը սկսած քաղաքին ամենահարուստ տնից մինչև չաւարտարի յետին խրճիթը, — իրաւասունների իրակատար իշխանութեան տակ է: Ահա, այսպիսի ընտրածակ իրաւունքներ շնորհելով և նոյնչափ ծանր պատասխանատուութիւն բարձրելով իրաւասունների վրա, մենք աւելի ևս բարոյապէս պարտաւորվում ենք մեծ հեռատեսութեամբ դիմել ընտրութիւններին: Նայեցէ՛ք քննողական աչքով մեր քաղաքի վրա. նրա պահանջները օրը օրէ մեծանում են, ժողովրդի տրտուշները սահման չունեն, բարդաւոր ժամանակի մնացորդ մարդիկ չեն կարողանում բացել առանց հառաչանքի: Այս բոլորը տեսնում ենք մենք, ամեն մինը մեզանից զբաւ է այս տեսակ վիճակի ծանրութիւնը, — սակայն որպիսի քաղաքի, որպիսին է քաղաքային իրաւասունների ընտրութիւնը, հասարակութեան առաջաւոր մարդկանց շատերը առանց նախապահակող միջոցների, առանց նախազգուշացնող ծանապարհների հանդիպում են ընտրութիւններին և թիթեւութեամբ սնցնում: Զանաչել ժողովրդի պէտքերը, կեցութիւնը, ջերմ հայրական խնամքով վերաբերել դէպի նրա պահանջները և ցուալը, ընդունակ լինել որոնելու այնպիսի միջոցներ, որոնք կարող են թշուառ մեծամասնութիւնը խճճված դրութիւնից հանել, ահա այն յատկութիւնները, որոնցից անբաժան պէտք է լինեն ընտրած իրաւասունները: Մեզ ի՞նչ հարկաւոր են դատարի, և բռնբիւն խօսքեր, կախարակական և ճոճող գունուոր Ֆրազներ, ի՞նչ հարկաւոր են օրային պրօէկտներ և պլաններ, որոնք չը ծագելով ժողովրդի կեանքից և նրա պահանջներից, — մնում են կամ անիրազորելի, կամ իրողութեանց յետոյ, միմյանի վրէժնաւոր բռնութեամբ ժողովրդին: Մեզ հարկաւոր են գործնական, էական ձեռնարկութիւններ, որոնք բղիթին մեզ շրջապատող իրական կեանքից և մեր ազգաբնակչութեան պահանջներից: Մենք չը պէտք է մտաւանդ, որ թիֆլիսի ազգաբնակչութիւնը կազմված լինելով մի քանի տարրերից, այլ

և այլ դասակարգերից և այլ և այլ թաղերից, — մեր ընտրութիւնները, ամբողջի, ընդհանուրի շահերը պաշտպանելու կարևորութեամբ, պէտք է լինեն համապատասխան այդ տարրերի, դասակարգերի և թաղերի պահանջներին: Հակառակ դէպքում, քաղաքի բաղըը յանձնել ժառանգաբար մի և նոյն անփոփոխ անհատներին, որոնք խտուն են, բացի սրանից ամեն հասարակական գործերում — դա կը նշանակէ դատարարի քաղաքի կեանքը մշտական անշարժութեամբ: Այսպիսի իրողութեանց ժամանակ, մենք ընտրողներս, փոխանակ ուսերը շարժելու և գլուխները թափ ապուր, պէտք է խոստովանենք, որ ընտրողները, շատ անգամ նոյնքան մեղաւոր են, որքան և ընտրվածները: Քաղաքի համար մի այդպիսի մեծ և ծանրակշիւր քաղաք, ինչպէս չորս տարվայ համար ընտրութիւնները, անդա՞նց կատարվելուց յետոյ՝ զղջալ, — անօգուտ է:

Կ. ԹԻՄՈՒՐԱՎԵԱՆԵՆԵ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՅ

Նոյեմբերի 10-ին

Մեր հասարակութեան մի մասը մեծ ուշադրութիւնով հետևում է ուսանողական կեանքին և այն ուսանողական թղթակցութիւնները, որ ժամանակ առ ժամանակ տպվում են մեր պարբերական թերթերում, կարելի է ասել, հետաքրքրութեամբ կարդացվում են: Մասնաւոր այն թղթակցութիւնները, որոնք վերաբերում են բուն ուսանողական կեանքին, կազմում են մի նիւթ այս և այն նկարագրութեանց: Աւելորդ էլ է ասել, որ ուսանող թղթակցիցները մեծ զգուշութեամբ և բարեխղճութեամբ պիտի հաւաքեն նիւթեր և յառնաջ բան պիտի ձեռք առնեն մտածեն որ գրածները քանու տուած, ամիցիպիլ խօսքեր չը լինեն: Երևան հասնել այս և այն պակասութիւնները օգտուալ մի գործունէութիւն է, բայց աղաւաղել կը պիտի ընդունակ չը լինելով բացատրել, համարել մի գործելի և վնասակար երևոյթ, դա է մի զուգիւր և վնասակար գործունէութիւն: Խօսք վերաբերում է այն թղթակցութեան՝ որը տպվել է «Մեղուի» № 115 համարում, կարօ ստորագրութիւնով: Թէ որքան աղին է, դիմակաւորված մէկի վրա յարձակվել, իր անուան տեղ կարօ ստորագրել, թողնում եմ ընթերցողի և «Մեղու» լրագրի դատողութեան: Այդ թղթակցութեան կարդացողը պէտք է շատ վատ կարծիք կազմի այն ուսանողների մասին, որոնք չեն ժամանակում նոր հիմնված գրականական ժողովում, իսկ, ընդհակառակ, նրանց որոնք անգամ են այդ ժողովում, պէտք է համարել ամենապարծուռնայ, ամենաքաղաքացած ուսանողներ: Թողնենք այդ երեխայական ինքնազովասանքը, թողնենք այն յիշոցները (մեծ-բըզդիներ, դատարկաբան ու լիւս և ան լուս և ան լուս և ան լուս և ան լուս) որ անուան են չափ ուղի որ աւելի վախճան է կը լինելին մի անկիթ մարդին քան թէ ուսանող-կարօն, և տեսնենք ինչ են անում մեր ուսանողները և ինչ պիտի անեն մեր հասարակութեան համար: Յաւելով պէտք է ասել, որ այս վերջին տարիներս ուսանողների կոնֆուսիոսը աղքատացել է: Ինքնուրոյն, իր զիտով մտածող և գործող ուսանողներ թիւը փոքրացել է. դրանք կազմում են ամենալաւ մասը հայ ուսանողների, իսկ, ընդհակառակ, պրօսակցիա պատռող, քրմապաշտների թիւը, դժբախտապէս շատացել: Այս վերջինները ընդունակ չը լինելով պահել և կարդացնել այն ուսանողական համակրական հիմնարկութիւնը, որ կարելի է ասել, ունի մի պատմական անցեալ, իսկ

կոյն մտածելին հին ժողովականներից բաժանվելու (այսինքն համոզեց նրանց բաժանվելու) կարգաւոր մի նեղ շրջան, նախադիւրով մի զօրքիչ-ուսական ծրարի և այդ շրջանը 10 կամ 15 հոգուց կազմված անուանում են գրականական ժողով: Ժողովը պէտք է նպաստի հայոց լեզուն, պատմութիւնը ուսումնասիրելու, նա իր դրամական միջոցներով պէտք է գրքեր հրատարակի, օժանդակի հայ գրականութեանը և մամուլին (այսինքն մեր մամուլը): Պէտք է խոստովանել, որ սկսած զորքը մի ծանր ուշադրութեան արժանի գործ է: Ուսանողներից որը չէ կամենում ծանօթանալ հասարակական հարցերի հետ: Կարծեմ դա մի անհրաժեշտ ճշմարտութիւն է թէ առաջ բան պատմութիւն ուսանելու, գրքեր հրատարակելու, պէտք է ազդի լեզուն իմանալ: Կից որ թէ մեր գրականական ժողով կազմողները հայերէն խօսում են, արդեօք, կը նշանակէ որ լեզուն էլ գիտեն: Եթե այդպիսի է միանշանակ լեզու և ուսանողից պահանջել, որ նա Պետ. կամ Մօսկվա դպրոց խնայն սկսի օժանդակել մեր մամուլին, յոգուածներ և թղթակցութիւններ գրել (ի հարկէ պ. կարօի թղթակցութեան պէս) և այդ ուսանողին համարել թէ դա, երևի, մի պիտանի երեխասար է: Մեր պատմութեան ուսումնասիրելու հարցը, ես միանշանակ անհաւորն եմ համարում ուսանողի համար: Ով որ փոքր է շատե պարագել է և մտածել է այդ հարցի մասին, նա իսկոյն առաջին քայլից հակացել է՝ որ այդ աշխատանքը իրող է և անս ինչ պատճառներով: Առենք օրինակի համար Մ. Խորենացուն, Եղիշէին, Փաւստոսին. ես կոպի իմանալ. պ. կարօն արդեօք կը հասկանար իր Ղարաբաղի կամ Արտաշատի բարբառով գունեա առաջի երեք տողերը Խորենացուց, գրականական ժողովի անդամներից միայն 3 գրաբառ լեզուն գիտեն (Նշվածների ձեռնարկից են), կը նշանակէ մնում է լեզուն սովորել: Խնդրեմ ասէք, պ. կարօ, արդեօք որքան էք պարագում անդողը որը, որ կարողանում էք և լեզուն սովորել, և լեզուն լեզուն լեզու և դանազան գրքեր կարդալ ձեր գործածան (?!) համար, ընթերցանել, թղթակցութիւններ գրել, երևի, դուք ֆենտոմէն էք: Հաւատալիքով եմ ընթերցողին, որ ի՞նչ ուսանողը բարեխղճաբար կատարի իր պարտաւորութիւնը, այսինքն լսի ամենայն օր իր լեզունները, կարող գտնէ մի քանիսը այն գրքերից, որ ընտրած առարկայի համար հարկաւոր են, այցելել զանազան գիտնական ժողովներ թէ իրաւաբանական, թէ աշխարհագրական, թէ մանկավարժական, հետեի ուսուցչ և հայ մամուլին, իսկ ի՞նչ գտանք էլ տալիս է — մի ժամ ազատ չի ունենալ: Կից որ թէ ուսանողը լեզուն գիտելի գիտէ, միթէ նա կարող է մեր պատմագիրները զուրս բերել մի որոշ, պարզ հակացողութիւն մեր անցեալի մասին. ես կարծում եմ — ոչ: Չարգացած ուսանողին բուսական չէ թագաւորների անունը, նա ունի ուրիշ պահանջմունքներ պատմութիւնից: Ինչ է նա կարդացել է մի պատմագիր լիտուանական գիրքը, գտնեա Բոկլը, նա իսկոյն տեսնում է որ մեր պատմագիրներից օրուտ չի քաղի, որովհետեւ նրա թերի են, առողաւորական տեսակետից են խօսում պատմական երևոյթներ մասին և նորա մէջ կը ծագեն հազար ու մի անբաւականութիւններ: Ուսանողը ինչ անի, գրաբառ լեզուն սովորի, պարսից և ասորաց լեզուն սովորի, արեւելքի պատմութիւնը սովորի, ինչ անի, նա շտաբած կանգնում է ճանապարհի մէջ, բուսականանում է Խորենացուն, Եղիշէն կարդալով: Եթե արդեօք թէ նա ցուալ բոլոր դժուարութիւնները, քաջ ծանօթացաւ բոլոր այն նիւթերի հետ, որ պարտաւորվում են ուրիշ հարեան ազդի պատմագիրների մէջ, միթէ նա կարծում է հայոց պատմութիւնը հակացաւ: Իմ կարծիքն է, որ այն ուսանողը, որը ընտրել է իր համար թէ իրաւաբանութիւն, թէ թուրանութիւն, թէ բնական առարկաները և այլն, անոր է մեր պատմութիւնը ուսումնասիրելու, այդ միայն կարող է լեզուագէտ ուսանողը, լաւ իմացող այլազգի

Երկուսն էլ և պատմութիւնը: Այժմեան դարի քաղաքակրթութիւնը բաւականին խիստ է վերաբերվում իր դրոժողներին, նա նոյնպէս պահանջում է գիտութիւն և միայն գիտութիւն: Ղեկավարում և անարարութիւնը պիտի դրոժող վերաբերվին նոյն, որոնք անուանվում են ուսուցիչ և ուսանող: Նա պիտի ընդունի իր շրջանը նոյն, որոնք ընդունակ են և պիտանի պիտի լինեն հասարակական ոյժերը զարգացնելու, նոյն, որոնք պատրաստված են հասարակական վտանգ զարգացնելու հասկանալու: Եթէ մեր ուսանողը ճանաչի իր ապագայ դերը հասարակութեան մէջ և աշխատի նախապատրաստվել և զինարարվել այն բոլոր ընդունակութիւններով որ հարկաւոր են անհատ-դրոժողին, նա կը նշանակէ ամենայն բարեխղճութեամբ կատարում է իր պարտաւորութիւնները, նա բարի սերունդ է իր ժողովրդի համար: Թող մեր հասարակութիւնը իմանայ որ Պետերբուրգի լաւ մասը ուսանողութեան զեռ քրտինքով աշխատում է ձեռք բերելու գիտութեան այն պտուղները, որի սերունդը նա պիտի ցանէ իր հայրենիքում: Նա զեռ գիտութեամբ է հոգաւորացնում անդամներին պէս, վարժում է իր անդամները՝ որ ժամանակով ոչնչացնի այն զգովելի էակներին, որ զեռ ծաղկած հասակում սկսում են կեղտոտել հասարակութեան առաջ ազնիւ մարդու անունը: Եւ միայն կամենում էի պարզել այս յօդուածով յարուցած հարցը, իսկ ինչ վերաբերում է այն կարծիքներին, որոնք պ. Կարոն յայտնում է մնացեալ ուսանողների մասին, եւ թողնում եմ անպատասխան, որովհետեւ հաւատացած եմ որ զբաղակցական ժողովի մնացեալ անդամները այնքան ազնիւ են և բարեխղճ, որ կը շտապեն մեր լրագրների միջնորդութեամբ հերքել այն չինժու ինսինուացիաները որ պ. Կարոն վերաբերում է Պետերբ. հայ ուսանողներին:

Կարելի է դրակ. ժողովի անդամները անբաւական մնան իմ այս թղթակցութիւնով և յայտնած մտքերս աղաւաղելով, ասեն թէ ես անդործ ուսանողներին պաշտպանում եմ, թէ միութեան թէնամբի եմ և այլն. եւ վերոյիշեալ մտքերս կարճաժամ կը կրկնեն և մի քանի պրինցիպիալական մտքեր կը կրկնաբանեն:

- 1) Գրակ. ժողովի ուսանողները թե՛լ ուժեր են:
- 2) Ժողովներին համակրում եմ միայն աւելի նեղ և ուսանողական մտաւորական պիտոյններին համապատասխան ծրագրով:
- 3) Մեր անցեալին հետ ծանօթանալ միայն պատմագրներից անօգուտ է: Կարելի է ազատ ժամերը դործ անել և այլ առարկաների վրա, որոնք են. քաղաքականութիւնը, սոցիոլոգիան և բնական գիտութիւնները:

Յովհ. Յովհաննիսեան

ՆԱՄԱԿ ԳՁԱՍԻՑ

Նոյեմբերի 8-ին
«Մշակի» № 189 մէջ Մօզզօլից ղեկավարված իմ նամակիս առիթով, ստացայ Մօզզօլի նամակիկի մի ազնիւ պարտնից հնորձակալութեան նամակ, որի մէջ յայտնում է ինձ իբր նոյն համարի «Մշակում» սպրդվել է իմ կողմից մի սխալ, որ պատրաստակարան դատարան պատի վրա կախած դազադով հանված պատկերը չէ եղել պ. Թուշմալեանցի հանգուցեալ որդու պատկերը, այլ Լեւոն Թաքաւորի գերեզմանը: Եթէ արդարեւ այդ ճշմարտ է, դրա մասին եւ չէի մեղաւոր, այլ իմ առաջնորդ, որովհետեւ կրք այդ պարտնիս հարցրի թէ՛ այդ վերնում կախած դազադով պատկերը ո՞ւմ պատկերն է, նա ասեց թէ ուսումնարանի բարերարի հանգուցեալ որդու պատկերն է: Գրա համար զեռ եւ խօսեցի նրա հետ, թէ անպատշաճ է պատրաստակարան դատարան մէջ այդպիսի պատկեր կախել: Պատկերը պատի շատ վերեւում էր կախ տուած, եւ կարծատես լինելով, մանաւանդ սենեակի բոլոր պատուհանները բաց չը լինելով, չը կարողացայ անձամբ ստորել, միայն բաւականացայ նրա հաստատ պատասխանով: Նոյնպէս իմ ազնիւ բարեխղճ և առաջարկում է ինձ մեր թեմի լիճակի թեմական տեսչի վրա մի քանի տող գրել «Մշակին»: Եւ վաղուց մտադիր էի մեր աչքաթող արած թեմի վրա մի քանի տող գրել, բայց ժամանակիս սղութեան պատճառով անհնար էր լինում ինձ գրելու ձեռք վերանշելու: Այժմ կամենում եմ փոքր ինչ տեղեկութիւն տալ «Մշակի» ընթերցողներին մեր թեմական տեսչի առիթով: Ատարականի թեմում մինչև այս օրս մի օրինաւոր թեմական տեսուչ չկար ունենել և եթէ բազմի բերմամբ նշանակել էին անցեալ տարի, մեր

Ղալարի բարձրագատիւ Աղամ վարդապետի յորդորանօք, մի եռանդուտ և արիւնջան երկուստարդին, Ղալարի սիրելի Աստուածատուր Կաճկաճեանցին, որը ձրի պիտի ծառայէր, նա էլ մեր կողմ բազմից տկարացաւ, և նրա ցարը անբժշկելի դարձաւ, ուստի նա չէր կարող բժշկներ խորհրդատուութեամբ թեմը շրջել: Որովհետեւ թեմի հասարակութիւնը անհամբեր սպասում էր, որ նշանակվի ուսումնարանների վրա մի եռանդուն թեմական տեսուչ, ուսումնարանները բարենորոգելու նպատակով, որովհետեւ զեռ մեր թեմում գտնվում են հին նահապետական ձևի տիրացու ուսուցիչներ և կամ կրօնուսույց, որ բուռնցքով ջրովում է իր ընկերակիցներին և այլն, յանկարծ անսպասելի պաշտօնապէս ստացվեցաւ հրաման սրբազան սինօդից նոր հաստատված թեմական տեսչի համար: Պարոն նոր տեսուչը մեզ բողոքիս յայտնի է, թէ նա ինչ գործ կը կատարի, թէ լաւ, թէ վատ. զեռ, իմ կարծիքով, ոչ ոք չունի իրաւունք բարձրակարգ կամ պատարակելու նրան, բայց մեզ վրա դրած նամակներէն և թէ հասարակութեան խօսակցութիւններից երևում է այլ տեսակ, իսկ մեր բամակամական խորհուրդը տալիս ենք նրան թողնել այդ իրան յանձնված պաշտօնը, որովհետեւ արդէն ամենիս յայտնի Լազարեան լինում ուսումը աւարտած զղալարցի Սարգիս Վարդանեանց, ջերմ փափագանօք ցանկութեամբ է յայտնել իրան այդ պաշտօնի մէջ հաստատելը: Գրա համար պ. Վարդանեանց արդէն խնդրամատոյց է եղել Վեհափառ Կաթողիկոսին թեմին ձեռնադրու պայմաններով: Նախ՝ պ. Վարդանեանց ոչ թէ զլիաւորապէս ցանկանում է օգտվել նշանակած ուժերով, այլ այդ ուժերից, ինչպէս լսեցի, կամենում է կիսել, մի բաժինը իր ճանապարհական ծախի համար, իսկ միւսը նուիրում է թեմի անհրաժեշտ ուսումնական պիտոյից: Երկրորդ՝ ինչպէս երևում է Ղալարի թեմական հոգաբարձութեան վրա ուղղած խնդրաբլից, որ խնդրում է միջնորդել Վեհափառ Կաթողիկոսին իրան հաստատել թեմական տեսուչ, որի մէջ պ. Վարդանեանցը յայտնում է, թէ ունի արդուական քանակում 5,200 ուղբի, Ղալարի մարտնչների համար, որ ամեն տարի նրա տոկոսիկը բաժանվի աղքատներին, բայց նրա այդ ցանկութիւնը իր նպատակին չէ հասնում. նա նուիրում է Ղալարի ուսումնարանին այն պայմանով, որ իր և հոգաբարձութեան գիտութեամբ այդ փողի տոկոսիկներով, մի ուսումնարան աղքատ աշակերտ ուղարկվի Մօսկովայի համալսարան ուսանելու և ուսումը աւարտելուց յետոյ վեց տարի պարտաւորված լինի մեր կեղեցական ուսումնարաններումը ծառայել: Գովելի և համակրելի գործ պ. Վարդանեանցի կողմից: Մենք ոչինչ չունենք ասելու, որ պարտք ուսումնական լինելով իր նրպատակը դրել է հասարակութեանը ծառայել և ինչպէս ասում են մի քանի ակնասուր պարտնիր, իբր մտադիր է իր բոլոր կարողութիւնը, մերձաւորապէս 20,000 լուրի իր մասից յետ նուիրելու ուսումնարաններին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս հասաւ ԹԻՖԼԻՍ Ֆրանսիացի պ. Բեդէ, որ գիտաւորութիւն ունի այսօր կիրակի, 21-ին նոյեմբերի, բարձրանալ օդապարկով Մուշապիղի այգուց:

Չեւանձու պրօֆէսոր Բէկէր արդէն բացել է Գուսիբեան հրատարակի վրա իր թատրօնը և սկսել է իր ներկայացումները:

Մեզ խնդրում են տպել հետեւեալը: «Օրդինատոր Մօսկովայի կայսերական ծննդատան և մուտցչական տան (Воспитат. Домъ) մանկական բաժանման բժիշկ, պ. Միսայ Միկոյանց, հասնելով ԹԻՖԼԻՍ ընդունում է հիւանդ կանանց երկուսը, չորսը և 4 ժամ կէսուրից յետոյ՝ իսկ առհասարակ բժշկական խորհուրդների տալիս է ամեն առաւօտ 8 ժամից մինչև 9 ժամ: Բնակվում է Լիսիցովի տանը, Մազովայա և Սերգիեւսկայա փողոցների անկիւնում»:

Առաջիկայ 1883 թ. յունվար ամսից ԹԻՖԼԻՍՍՈՒՄ կը հրատարակվի մի նոր հայերէն ամսագիր «Աղբիւր» վերնագրով: Այդ հրատարակութիւնը նշանակված է երկխաների, ծնողների և դաստիարակների ընթերցանութեան համար: Պրօ-

գրամայի հետ ընթերցողը կարող է ծանօթանալ «Մշակի» ներկայ համարի վերջին երեսի վրա սպված յայտարարութիւնից: Ամսագրի տարեկան բաժանորդագիրը 3 լուր է, կէս տարեկանը 2 լուր, առանձին տետրակները 15—40 կօպէկով: Օտարաբարձարացի կարող են գիմել հետեւալ հասցեով. Тифлисъ, редакция «Ахшуръ»: Ամսագրի խմբագիր-հրատարակիչը պ. Տիգրան Նաղարեանցն է:

Լայս տեսաւ «Արժարան» մանկավարժական ամսագրի № 4 տետրը: Տետրի բովանդակութեան հետ ընթերցողը կարող է ծանօթանալ «Մշակի» ներկայ համարի վերջին երեսի վրա սպված յայտարարութիւնից:

Սեզար գիւղի բանանայ Յովակիմ Տէր-Գեորգեանից ստացանք հետեւեալ նամակը: «Մեր գիւղացի հասկացան որ իրանց դաւակների ապագայ բարդաւորութիւնը կարիւր է ուսումից, ուստի ներկայ թէ՛լ նոյնեանցի 1-ից բաց արին կըլուում հայոց ծխական դպրոց: Գարոցի համար պատրաստեցինք մեր համադրուցի հանգուցեալ Յովակիմ Գալուսեանցի սենեակները, կանխապէս թողուութիւն խնդրելով հանգուցեալի փեսայ Բէջան-բէկ Սարապիկեանից և նրա կնոջից, որոնց իրաւունքի տակն են այդ սենեակները: Մեր ջերմ ջնորձակալութիւնն ենք ուղղում այդ անձանց: Սենեակները բաւական յարմար են դպրոցին ծառայելու, թէ բուսուր և թէ ընդարձակ լինելով: Միայն շինութիւնը հին լինելով, կարօտ է վերանորոգութեան, որովհետեւ խախտված տեղեր ունի: Գարոցի համար ուսուցիչ հրաւիրվեցաւ պ. Գրիգոր Գրիգորեանց և դասատուութիւնը սկսվեցաւ: Ուսումնարանի վրա հոգալու համար հոգաբարձուներ ընտրվեցան պ. Գ. Գարոն Կաթողիկոսից, Բալա-բէկ Միսայանց և եւ (բանանայ Տէր-Գեորգեանց): Հոգաբարձուների ցուցակը շուտով կառավարվի հաստատութեանը ուր հարկն է: Վերջացնելով գրութիւնս խոնարհաբար խնդրում ենք թէ «Մշակի» և թէ հայոց այլ պարբերական հրատարակութիւնների խմբագիրներին, բարեհաճեն մեր դպրոցին նուիրել թրեմից հրատարակութիւններից մի մի տարեկան օրինակ: Լրագիրները կարելի է ուղարկել Ղաղախի Գարովանարայ գիւղի ծխական դպրոցի հոգաբարձու պ. Կարապետ Յովակիմեանցի անունով, իսկ նա մեզ կը հասցնէ յիշեալ լրագիրները»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Փարիզի մէջ վերջին ժամանակներում անհանգստացող լուրեր էին տարածված Հանրապետութեան նախագահ Գրիգորի անուղջութեան մասին, գրում է «Голосъ»: Լրագիրները բացարձակ պատմում էին, որ ժիւլ Գրեյի ունի ձերբութեան այն հիւանդութիւնը, որ ստանում են մտաւոր ծանր և անընդհատ զործուեղութիւն ունեցող մարդիկ: Նախագահի հիւանդութեան հետ ծանօթ բժշկները հաւատացնում են, որ հիւանդութիւնը շատ տևուր հեռանք կարող է ունենալ, եթէ Գրեյի մի աննշան բարոյական վրդովմունքի կենթարկվի և որ նրա հիւանդութիւնը անպատճառ կը վերջանայ նրա մտաւոր ընդունակութիւնների թղլուութեամբ, եթէ նախագահը չի փոփոխի իր այժմեան կենցաղավարութիւնը: Այս հեռանքների առաջն առնելու համար բժշկները անհրաժեշտ են համարում Գրեյի համար կատարել հանգստութիւն, մաքուր օդ և նրա անպայման հեռանալը զործուեղութիւնից:

Այսպէսով ինչ որ էլ պատահի Ֆրանսիան ամենակարճ ժամանակամիջոցում պէտք է ընտրել պետութեան մի նոր առաջնորդ:

այդ երկու ժողովների այժմեան կազմակերպութիւնը, անկասկած նախագահ կընտրվի իսկական հանրապետական շարք է ծագում միայն, թէ այդ հանրապետականը կուսակցական ո՞ր բաժնից կը լինի:

Մինչև այժմ այդ պաշտօնի համար երեք կանդիդատներ կան: Հասարակական կարծիքը մասնացոյց է լինում Գամբետույի վրա: Հակագամբետականները և արմատականները ցոյց են առնու պատգամաւորների ժողովի այժմեան նախագահ Բրիսսոնին, իսկ միապետականները, որոնք հասկանում են, թէ չեն կարող ընտրել իրանց մարդուն, խմբվում են զենքիւ Շանյիի անուան շուրջը, որ թէպէտ ձշմարիտ հանրապետական է, բայց մի և նոյն ժամանակ պահպանողական հայացքներ ունի:

Այնուհետև լրագիրը, քննելով, թէ այդ երեք կանդիդատներից ո՞վ աւելի յոյս կարող է ունենալ հանրապետութեան նախագահ դառնալու համար, հասնում է այն եզրակացութեան, որ Գամբետուս միակ մարդ է, որ կարող է ձայների բազմութիւն ստանալ և ստանձնել այդ պաշտօնը:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՆ

Վան, 12/24 հոկտեմբ.

Բաղէշի (Բիթլիս) հրդեհին համար, որպէս զրեցնիք նախորդ նամակով թղթը կատարութիւնը կաշխատի հաւատացունել ամենին թէ պատահմամբ երկած է: Բայց եթէ այդ հրդեհը պատահմամբ էր եղած, ինչպէս եղաւ որ գիշերը եւրօպական ժամ 7 1/2-ին սկսած հրդեհը մինչև հետեւեալ օր երկուսին տևեց քանի որ Բաղէշի պէս տեղ մը մի քանի շէնքեր վայրենակով կարելի էր հրդեհին առջևը առնել: Ամենէն դարմանալին այն է, որ այրուած 700-էն աւելի խանութներուն մէջ թէ թիւըն և թէ հայի խանութներ կան, բայց թիւրքերը իրենց վաճառքները անվիսաւ օդատած են, իսկ հայերը կը փախցունեն խանութներէն իրենց վաճառքները, կառավարական գործերն և Արցախի բողոքին այնտեղ պատրաստ կեցած, ձեռնով կը յայտնակեն հայոց ձեռքն և այս ընդհանուր ստակալ կողպուտին ժամանակ նահանգապետ փաշայս լոկ իբր հանդիսատես կանդնամ, կարծես կուսակցական քրիստոնէի կողպուտուեղուն վրա և բնաւ չարդիւր ոչ զօրաց, ոչ ալ բողոքուեալ: Հրդեհին շատ աւելի մեծ վնաս պատճառած է կողպուտը. քրիստոնէից բոլոր հարըստութիւնը անցած է մահմետականաց ձեռք: Երկու կայ թէ վանի մէջ ալ 1876-ի ստակալի հրդեհը նորոգուի: Եթէ կուսակցական տէրութիւններ ուշադրութեամբ չը դարձունեն այն կողմի վրայ, անշուշտ զեռ շատ տխուր տեսարաններ պիտի տեսնեմք այնտեղ: Բաղէշի հայերէն պատգամաւորութիւն մը գնացած է Երզրում, Բաղէշի նահանգապետին դեմ բողոքելու և իրանց իրական մասին Երզրումի նահանգապետին միջնորդութիւն և պաշտպանութիւնը խնդրելու համար: Բայց յայտնի բան է, որ այդ պաշտպանութեան վրա դրուած յոյսը մտաոխ է:

Չինուորական մի քանի բարձրաստիճան պաշտօնատարներ եկած են այստեղ Երզրում, Մուշ, Բիթլիս պտտելով, սոցա պաշտօնն է ամբողջները գննել և մեր կողմի սահմանապահութիւնը լաւ ուսումնասիրելու ազգապետական տեսակետով: Վասն թէ վանի շրջապատը ամբողջութեամբ շինելու պիտի ձեռնարկեն. բայց առ այժմ սոցանէ մի քանիս կերթան Գաւառ, շէյխ Կրաղուլարի ժօտ որ մի կողմէ սուլթանին խորին յարգանքներ և սննունէր հպատակութիւն ցոյց կը տայ, իսկ միւս կողմէ ղմամարութեան պատրաստութիւններ կը տեսնէ: Եկելը պատուիրել է իր մարդոց որ հայոց հետ լաւ վարուին և թէ բողոքներուն հայոց հետ թշնամարար վարուելը մինչև այժմ սխալ բազմաբաղկանութեան եղած է: Յիշեալ ղմամարական պաշտօնեայները պարսից կառավարութեան հետ պիտի կարգադրեն նաև թրքա-պարսկական սահմանապահի խնդրը որ Կոստուրը պարսկին յանձնուելն է վեր անարչ մնացած է: Ժողովուրդին մէջ կը խօսուի այստեղ թէ Արդարութեան ժողովին և վճարներն ժողովին նախագահ Բեռք-բէկ, որ երբեմն Պետերբուրգի օսմանեան ղեկավարան ամբ ալ ծառայած է, Նալ-

բանդանց կարգապահ անուն մի հայի տուն ճաշ-
կերտով հրակրուած լինելով, այնտեղ հարբած
ժամանակ հայերին սաստիկ անպատեհաց: Այս
լուր, որ ժողովրդին մէջ կը պտտի, սաստիկ
զրգուծելուն կը պատճառէ այն խնջոյքին մէջ
զտուող հայ հրակրեալներին դէմ, որք կուրանան
այժմ թէ այդպիսի բան չէ պատահած: Բայց այդ
լուրը դեռ չէ հեղքուած և զրգուծելուն այն սս-
տիճանի կը հասնի, որ Սէֆիլեան Միտրի ա-
նուն մի երիտասարդ չը կրնալով զինքը դասիկ
հայ ազգի կրօնի դէմ եղած այն աստիճան վատ
թշնամանքի առջև, երկէ կերթայ կը ներկայանայ
Բեռնի Բեկին երբ նա մի հայ վաճառականի խա-
նութ նստած էր: Կը սկսի Բեռնի Բեկին անար-
գական խօսքերով անպատեհ խոր այդ արածի
համար, երեսն ի վեր թքել և սպառնալիքներ ա-
նել հայ վաճառականին ալ որ մեր ազգային ժո-
ղովին անդամ է: Յետոյ ալ Սէֆիլեան կրակոտ
երիտասարդը շուկային մէջ կը պտտի և մեր ազ-
գային ժողովի անդամ եղող արաններու խանութ-
ներուն առջև կանգնած, կը սկսի անպատեհ
նոցա թէ դուք ինչպիսի մարդեր էք որ հայ ազ-
գին անպատեհութիւն եղած ժամանակ լուռ կը
մնաք, առել լուռ է որ ձեզ նման ցած հայ
իշխանները սաստիկ որ մենք ալ դիտանք
թէ մեզի դուրս, պաշտպան չը կայ և մեր արա-
ծը անկեք և այլն կը պտտայ: Մի քանիներ զինք
կը վաճառեն իրենց խանութի առջևէն, սրիկայ
և այլն կոչելով, բայց խառնազգուցում այն սս-
տիճանի կը հասնի որ սաստիկաներ կը միջամը-
տեն և Սէֆիլեան կը տանեն կառավարութեան
դուռը: Այնտեղ Սէֆիլեանի վրայ կը գտնեն մի
չուան վրան աճառ քսուած և մի կտոր ալ ա-
ճառ: Անեթարհն թէ Սէֆիլեան մտաղբի է
եղեր ինչդէլ Սեռֆին, զինք առանձին մի տեղ
գտած ատեն, ուստի կը բանտարկեն Սէֆիլեանին:
Երկէ երկուց մի քանի աղբիցիկ հայեր կերթան
կառավարութեան կիսապետին թէ այդ երե-
տասարդը հարբած լինելով անզիտորէն արած է
այդ բաներ, կառավարութիւն ալ կասկածելով
թէ դուք մեծ զրգուծելուն լինի ժողովրդին մէջ
նորա բանտարկութեան պատճառով, արձակեց
նորան: Տեսնենք թէ այս խնդիրը մի հետեանք
պիտի ունենանք:

ների ուշադրութիւնը դարձնել Չերնոզորիայի զին-
տրովիւր վրա և շրջաբերաբար կը հաղորդի պե-
տութիւններին այն ձեռնարկութիւնները, որ ուղ-
ղված կը լինեն չերնոզորիական սահմանական
դեռ ևս վիճելի հարցերը վերջնականապէս վրձ-
ուելու համար:

— Հավաստի գործակալութեանը Լոնդոնից հե-
ռագրում են նոյեմբերի 17-ից: Հերէլ Լոնդոնում
մեծ միտինգ կայացաւ ազգային ազատամիտների
կողմ հիմնելու համար: Նախագահում էր Էրոզ
Նորսրուպի: Ներկայ եղողների թիւում գտնվում
էին Էրոզ Կերրի, մարկիզ Հարթինգտոն և սեր
Հարկորտ. միտինգը հաստատեց կուրի հիմնա-
կութիւնը և քաղաքական պատմական դրադարա-
նի «Վաղարշտոնի դրադարան» անունով: Դա ցան-
կաբար յայտնեց, որ Վաղարշտոն կուրի առաջին
նախագահ ընտրվի:

— Փարիզից հաղորդում են նոյեմբերի 19-ին,
որ Լիտուան կառավարվում են 25 մարտիկ, դրանց
թիւում և երեք օտարազգիներ, որոնք միջազգային
ընկերութեան անդամներ են:

— «Новое Время» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը
գրում է հետևեալը: Ներկայումս մասնաճիւղ Ռուս-
աստանը պարտաւոր է եռանդոտ քաղաքականու-
թեան հետեւ արեւելում, գոնէ Անգլիային նման-
վելով այդ բանում: Աւելորդ չէր լինի մեր դիպու-
մատների համար ուշադրութիւն դարձնել հայերի
վրա նա: Բանը նրանումն է, որ չուտով կը լինի
հայոց նոր պատրիարքի ընտրութիւնը: Այդ հո-
գեւոր ազգերութիւն ունեցող մեծ պաշտօնի համար
երկու կանդիդատներ կան՝ Բրուսայի եպիսկոպո-
սը, որը, որդէս առաջին մինիստր Սաիր-փաշայի
անձնական բարեկամ, ասում է որ աշխարհի վրա
հայ ժողովրդից քաղաքօր ժողովուրդ չը կայ, և
այդ պատճառով բոլորովին պէտք չունի Բրուսայի
դաշնագրի 61-րդ յօդուածի մէջ, և սրբազան խորէն
Նարբէյ, որ ազգային կուսակցութեան կանդի-
դատ է: Վերջինը միտք ունի հետեւ Ներսէս
պատրիարքի քաղաքականութեանը և պահանջի
վերջինից յօդուածի գործադրութիւնը: Բայց նրա
և Ներսէսի մէջ այն դանդաղութիւնը կայ, որ
Ներսէսը Անգլիայի պաշտպանութիւն էր որո-
նում, այն ինչ խորէնը, ինչպէս և բոլոր առձա-
նարակ լուսաւորեալ հայերը, իրանց յոյսերը դնում
են Ռուսաստանի վրա, խոր համոզված լինելով
որ իրանց ազգակիցները Ռուսաստանի դօրեղ հո-
վանորութեան տակ կարող են վերին աստիճա-
նի ծաղկման հասնել: Եթէ, ինչպէս յոյս կայազ-
րութիւնը ազգային կանդիդատի կողմը կը մնայ,
այն ժամանակ Ռուսաց դիպլոմատիայի գործու-
նեթիւնն համար հայերի մէջ ընդարձակ առաջ-
բեջ կը բացվի և Ռուսաստանը հնար կունենայ
ամբողջով իր ազգերութիւնը փոքր-Ասիայի շատ
նշանաւոր մասի մէջ:

ԽԱՌՆ ԼՈՒԻՐԵՐ

Լրագրի բնութիւնը տարածողն էր: Նրանք
կատարեալ ամբողջական հնարակութեան պը-
տուղներ են. այնտեղ նրանք առաջին անգամ
յայտնեցին, այնտեղ են գաղափարում և այնտեղ
կարող են իրանց դրութիւնը ապահովել: Ամբի-
կայում կան սենատորներ, կոնգրէսի անդամներ,
նշանաւոր ֆինանսիստներ, խմբագիրներ, հրատա-
րակիչներ, փաստաբաններ և այլն, որոնք 30—40
տարի առաջ լրագրի բնութիւնը տարածում և կօ-
չիկ սրբողներ էին: Ջէյմս Բէնէտ «New-York He-
rald» լրագրի խմբագիրը 45 տարի առաջ հան-
գիպելով մի ուրախաբեր լրագրական տարածու-
ղին, նրա հետ երկար խօսակցելուց յետոյ, իր
աշխատակիցը շինեց նրան. իսկ այժմ նա լրա-
գիրներ հրատարակողներից ամենահարուստներից
մէկն է: Նոյնպիսիք են միլիոնատէր—հրատարա-
կիչներ Չարլզ Աքել և այլք, որոնք առաջ լրա-
գիրների տարածողներ էին:

ՆԱԿԱՐԱՆ

Հուշակաւոր դիտանական կրկնաւոր ընտանի անու-
նը յաճախ կրկնվում է Փարիզի լրագիրներում,
որովհետեւ այս շարքի վրա սկզբում կայացաւ նրա
աղջկայ, Նոյեմբի, հարսանիքը Աթէնքի համալսա-
րանի պրօֆէսոր Պոլիտարիի հետ: Պոլսի կա-
տարիներու քրիստոնէական ծէսով: Պ. ընտանի
ամուսինը, նախկին օրիորդ Շեֆֆէր (հանդուցեալ
Արի Շեֆֆէր նկարչի քոյրը), պատկանում է բո-
ղոքական կրօնին, որի մէջ և դաստիարակեց իր
աղջկան. պ. Պոլսարի ուղղափառ է: Նորա-
պատկանի եկեղեցական պատկը այդ պատճա-
ռով, կատարվեցաւ բողոքական արժեքատան և
առուսաց զինպանութեան եկեղեցու մէջ: Պ. էր-

նկատ ընտան այդ շատ ընտան համարեց հակա-
ռակ այն հակադեմոկրատիկ ձգտումն, որ ստի-
պում է ֆրանսիական ազատ մտածողներից շա-
տերին բաւականապէս քաղաքական սպառնի ծե-
սով ոչ միայն իրանց համար, այլ և իրանց զա-
ւակներին համար: Օրիորդ Նոյեմբի ընտան իր մար-
դու համար բոլորովին օտարոտի բաժնիք բերեց:
Նրա հայրը և մայրը վաղուց բարեկամ էին Նա-
պոլէոն III-ի կաթնաբոյժ, տիկին Կորնիլի հետ:
Այդ նշանաւոր կինը մեծ ազդեցութիւն ունէր
իր արքայազն եղբոր վրա, թէպէտ շատ ան-
գամ չէր հաւանում նրա գործելու եղանակը—
Հանդուցեալ կայրը անասման հաւատ ունէր
դէպի նրան, որ ամբաստնութիւն էր տիկին Կորնիլի
կատարեալ անշահասիրութեամբ, որը անցկաց-
րեց իր կեանքը համարեալ աղքատութեան մէջ և
երեք չէր համաձայնվում օգնութիւն ընդունել,
որ կայրը յաճախ առաջարկում էր նրան: Երկ-
րորդ կայսրութեան թէ բոլոր գործերի և թէ անց-
քերի մասին, յարգելի տիկինը մանրամասն օրա-
գրութիւններ էր կազմում, որ պահպանվել են
խորը զաղտնիքի մէջ: Հաստատ համոզված լինե-
լով, որ հասարակութիւնը կատարելապէս հաւատ
է ընծայում նրա ճշմարտախոսութեանը, նա լու-
ղիտէր թէ ինչ ահապէն զին ունեն այդ օրագրու-
թիւնները և, վախճանվելով, կտակեց դրանց,
փոխանակ բաժնիքի, օրիորդ Նոյեմբի ընտանին:
Տիկին Կորնիլի օրագրութիւնները շուտով ի յոյս
կընծայվին: (ՂՈՅՈՅ)

Չ ա ի է ր Մ ա զ օ ի ի իր գրականական գործու-
նեթիւնն յիստորիական պատճառով վիճելուցի-
ններից ստացաւ մի թանգալին ընծայ: Այդ ըն-
ծան, որ գեղեցիկ կերպով կազմած է, Եւրօպայի
մեծ մասնագիրների և արախոսների ինքնակնի-
սադրութիւնների մի մեծ հաւաքածու է:

Մ օ ղ օ զ Ֆ ի է ի ի հ ար ի ւ ր ամ և ակ ք ա-
ր ի զ ու մ: Փարիզում և Լոնդոնում այս օրիցս
տօնում էին Մօնթեֆիէրի արած օրագրերի
զիտի հարկբաւանկը: Երկու մայրաքաղաքներն
ևս այդ դեպի գործածութեան առաջնութիւնը
իրանց են վերաբերում: Բայց, թվում է, որ Փա-
րիզը այս դեպքում առաւելութիւն ունի: Ֆրան-
սիական տօնախմբութեան մէջ, շատ բնական է,
որ յիշում էին այդ դեպի անցեալը, յիշում էին
այն անկարգութիւնը, յիշում էին իրանց համար
բաւակութիւնը զրում էր դէպի այդ դեպքը. նա յոյս
ծաղեցրեց շատերի մէջ, որ մարդկութեան համար
դիտութեան շրջանը մինչև վերջին սահմանները
ընդարձակվեցաւ: Ետեւոր մտածում էին, որ այդ
դեպքը յետոյ պէտք է համաշխարհային յեղափո-
խութիւն պատահի, բոլոր ազգերը կեղծարանան
օրային տարածութիւնների մէջ, բոլոր արգելքները
կոչնչանան նոր ձևի տեղաշարժութեան առաջ,
երազում էին դեռ ևս չը հետազոտված աշխարհի
մասերի վրա: Հարուստ ճանապարհորդութիւններ էին
շատերը օրային ճանապարհորդութիւններ էին
կազմում, արքայազն իշխանները ուղևորվում էին
օրագրակիցներով: Բայց այդ յոյսերը, այդ երազ-
ները բոլոր ի դրեք երան: Ուրէս գործնական
միջոց օրագրակիցով ճանապարհորդութիւնը մին-
չև մեր օրերը շատ աննշան յաջողութիւն-
ներ է ունեցել: Դասականականից ֆրանսիական
օրագրակիցները մինչև այժմ էլ շինվում են այն
ձևով, որպէս շինել է 1783 թվին Եւրոպ: Միայն
գրականական կետից Մօնթեֆիէրի դեպքը իր նշա-
նակութիւնը ունեցաւ: Ի պատիւ Մօնթեֆիէրի
Փարիզում ֆրանսիական ակադեմիան բանկէտ
կազմեց: Տեսանդիէ յիշեցրեց օրագրակիցների
մարտիրոսների մասին:

ՎՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՍՏԵՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆՅՅ
Ս. ՊԵՏԵՐՈՒՆԻ, 18 նոյեմբերի: Վերջին
շաբաթվայ ընթացքում Պետական բանկից
զուրս տարվեցան 6,000,000 ռ. գումարներ
նահանգների համար: Պետական դանձարա-
նի ընթացող հաշիւը Պետական բանկի մէջ
հասնում է 63 միլիոնի: Կուրսերը բարձրա-
նում են. Լոնդոնի վրա 23 1/8 պէնս, Փարի-
զի վրա 250 1/2 ֆրանկ, Համբուրգի վրա
203 1/2 մարկ, սուկի 8 ռ. 26 կ., արժաթէ
բուրլ 1 ռ. 38 կ.:

ՄՕՍԿՎԱ, 18 նոյեմբերի: Կուսման թոյլա-
ւութիւն է ինդրում քաղաքային փոխա-
ուութիւն անել, երեք միլիոն օրլիզացիաներ
հրատարակելով:

ՆԻՎՈՒԱՆՎ, 18 նոյեմբերի: Եղանակը լաւ
է: Ծովային նաւագնացութիւնը շարունակ-
վում է:

ՕԳԵՍՍՍ, 18 նոյեմբերի: Բօրային մաս-
նաժողը մտաղբի է ինդրել, որ քաղաքեցի-
վի տրանզիտը Բաթումի վրա: Ռուսաց ըն-
կերութիւնը պայմանաւորվում է Յունաս-
տանի հետ Յունաստանի, Վարնայի և Կ.
Պոլսի մէջ փոստային տեղափոխութեան մա-
սին:

ՅԵՏԻՆԻՅ, 18 նոյեմբերի: Չերնոզորիական
պաշտօնական լրագիրը հերքում է լուրերը
Չերնոզորիայի զինուորակալութեան մասին:

Կ. ՊՈԼԻՍ, 18 նոյեմբերի: Պետութիւն-
ները ընդունեցին թիւրքայի առաջարկու-
թիւնը հաւատարմատարներ ուղարկելու մա-
սին յոյն-թիւրքական վերջնական սահման-
ները որոշելու համար: Կալանաւորված են
մարշալ Ֆուադ և ուրիշ անձինք, որոնք
կասկածված են զաւարթութեան մէջ զահ-
ընկեց արած սուլթան Մուրադի իշխանու-
թիւնը վերականգնելու համար:

ՄՍԿՈՒԿ, 18 նոյեմբերի: Անդալուզիայի
և կատալոնիայի մէջ կալանաւորվում են
բազմաթիւ սօցիալիստներ:

Ս. ՊԵՏԵՐՈՒՆԻ, 18 նոյեմբերի: „Пра-
вит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է, որ
նոյեմբերի 10-ի անկարգութիւնների պատ-
ճառով կալանաւորված ուսանողները չորս
կարգի են բաժանված. Առաջին կարգի 46
ուսանողները, որոնք սկզբնապատճառ դար-
ձան և եռանդով մասնակցեցին անկարգու-
թիւններին, անպայման հեռացրած են հա-
մալսարանից և ուղարկված են իրանց բնա-
կութեան տեղերը, բայց նրանցից, որոնք
ճնոգներ ունեն Ս. Պետերբուրգի մէջ, վեր-
ջինները յանձնված են իրանց ճնոգներին և
ենթարկված են պոլիցիայի հսկողութեանը:
Երկրորդ կարգի 23 ուսանողները, որոնք
մեծ մասամբ անչափահասներ են և որոնք
հետեւ են ուրիշների օրինակին, հեռաց-
րած են համալսարանից, բայց կարող են
նորից ընդունվել, եթէ կը զղջան: Սրանց
թոյլ է տուած ապրել մայրաքաղաքի մէջ:
Յրրորդ կարգը 13 ազատ ունիւղիւններ են,
որոնք զրկված են դասախօսութիւններ լսե-
լու իրաւունքից: Չորրորդ կարգը 16 ուսա-
նողներ են, որոնք ենթարկված են միայն
կալանաւորման ի պատիւ նրանց առաջվայ
լաւ վարքի և եռանդոտ աշխատանքների:
Այժմ կարգապահութիւնը վերականգնված
է, թէպէտ նկատվում է փոքր վրէպմունք:
Ահապէս մեծամասնութիւնը ոչ թէ միայն
չէ համակրում անկարգութիւններին, այլ
ընդհակառակը նրանց ընդդիմանում է:

ՓԱՐԻԶ, 18 նոյեմբերի: Չը նայելով անդ-
լիական կառավարութեան և մամուլի ան-
բաւականութեանը, ֆրանսիական կառավա-
րութիւնը յայտնեց անզիտական դեսպանին
Փարիզի մէջ, որ նա կը պաշտպանէ իր ի-
րաւունքները Մադագասկարի մէջ: Անգլիայի
և ֆրանսիայի յարաբերութիւնները լարված
են: Այդ հանգամանքը ազդում է եզրկա-
տական հարցի մասին կատարվող բանակ-
ցութիւնների վրա:

ԲԵԼԳՐԱԿ, 18 նոյեմբերի: Նկարիչ Մար-
կովիչ և քաղաքադուրու կնեստեկցա կալա-
նաւորված են: Նրանց կասկածում են դա-
ւադրութեան մէջ թաղաւորի կեանքի դէմ:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԾՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌՈՒՄԱՆԱԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐ
սիստեմատիքական ընթացք
Գրքերի վարձկանան

Հայոց միջնակարգ ուսումնարանների համար
մասն առաջին (ամբողջ թուեր)
Մամուլի տակից լցյ տեսաւ նոյն խնդր-
ներին երկրորդ մասը (կտորակ թուեր
և երրորդական կանոններ):

Գինն է 40 կոպ.

Ուսումնարաններին զիջումն 20%:
Ծախվում է Վ. Շահվերդեանի լրագրական
գործակալութեան խանութում:

Օտար տեղերից զինում են այս հասցեով
Тифлисъ, въ Агентство В. Шавердо-
ва:

ՏԵՐ-ԱՐԲԱՆԱՄԵՆՅԻ
Օ Ր Ա Յ Ո Յ Յ

Գինն է 10 կ. դումարով գնողներին
15% զիջումն

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՅԱՌԱՆՈՑՈՒՄ.
Նոյն տեղը

Պ. Միանասարեանցի «ՔՆԱՐ ՀԱՅՎԱԿԱՆԻ»
մնացած օրինակները՝ անկազմ 2 ր.,
կազմած 2 ր. 50 կ.:

Տասից աւելի գնողներին 20% զիջումն:
(չ. և շ.) 4—6

ԱՍԱՄԱՐՈՑԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ (Doctor of
Dental Surgery of the Baltimore Col-
lege):

ՏԻՎԻՆ ՄԿՐՏԵԱՆՅԻ, ծն. Եսկոբի, բժշ-
կում է ամեն տեսակ ԱՍԱՄԻ ՑԱՆԵՐ և ա-
նում է հարկաւոր ՕՊԵՐԱՑԻՆՆԵՐԸ ԱՎԵՐ-
կայի ամենամոր ձևով: Ընդունում է միայն
ԿԱՆԱՅ և ԵՐԵՎԱՆԵՐԻՆ 10—3 ժամը: Լի-
սիցիայի տանը, Սարգսյան և Սերգիևի-
կայա փողոցների անկիւնում:

2—15 81—100

ԱՌԱՋԻԿԱՅ 1883 թ. ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԿԸ ՍԿՍՎԻ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ

«Ա Ղ Բ Ի Ի Ր»

Մի ամենայ հրատարակութիւն երկամսերի, ծնողների և դաստիարակների համար:

(Տարէնը լցյ կը տեսնի 12 համար 1—3 թերթ)

Բովանդակութիւն

I) Վէպեր, մանրամասն պատմութիւններ, հեքիաթներ, կենսագրութիւններ:
II) Բանաստեղծութիւններ:
III) Գիտութիւն և արուեստ:
IV) Մանկավարժական և այլ յօդուածներ, թղթակցութիւններ, առաջարկութիւն-
ներ, լուրեր, խորհուրդներ:
V) Հետաքրքիր տեղեկութիւններ և խառն լուրեր:
VI) Մատենախոսութիւն և նոր զրքեր:
VII) Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկու-
թիւններ:
VIII) Զուարճալի մանկական, ֆրեթլան, շախմատի և այլ խաղեր, բերուածներ,
թուարանական խնդիրներ:
IX) Անեկդոտներ, հանելուկներ:
X) Ա. յ. և այլք
XI) Երգեր նոտաներով:
XII) Յայտարարութիւններ:
Տարեկան գինը 3 ռուբլի, կէս տարուանը 2 ռ., առանձին համարները 15—40 կ.:
Ծանօթ. ա) Վէպեր, կենսագրութիւններ և այլն կարող են լինել և պատկերներով:
Բ) Համարներից աւելի քան վեցի բովանդակութիւնը կարող է միայն և վէպերից
կազմուած լինել:
Գ) Տարեկան բաժանորդները կը ստանան երկու պրեմիա. յուլիսին մի պատկեր, իսկ
գեկտեմբերին օրացոյց առաջիկայ տարուայ համար:
Հասցէն, Тифлисъ Редакция «Ахшюръ» իսկ արասասհամայնից, Tiflis (Cauca-
se) Redaction du journal «Agbü»

Խմբագիր-հրատարակիչ Տիգրան Նազարեանց:
1—5

ԲԱՅՑԻ
ԽԱՄԱՅԻ
ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գինն է 1 ռ. 50 կ.

Գրքը բաղկացած է 467 երեսներից
Թիֆլիսում վաճառվում է՝

«Մշակի» խմբագրատանը. — Կենտ-
րոնական գրադատական տնտեսում
Միլիանովի տանը № 3 և 4. Պ.
Զաքարիայ Գրիգորեանցի «Կովկաս-
սեան գրադատական տնտեսում».
Պ. Էնֆիլաճեանցի ծխախոտի խանու-
թում. — Պ. Շահվերդեանցի ծխախոտի
խանութում:
Օտարապաղարացիք կարող են գիմել
կամ յիշեալ տեղերը, կամ սեղանի հե-
ղինակին հետևեալ հասցեով:
ТИФЛИСЪ. Редакция «Мшакъ»
РАФФИ.

ԹԷՑ առաջին հունձի այս տարի չա-
փազանց զոյնաւոր և հոտուէտ: Այդ թէյից
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ
ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է
25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ
տեղ: Օրինակ. Լաւ ԿՕՆԳՕ թէյ 1 ռ.—1 ռ.
20 կոպ., պատուական ՍԱՆՑԱ թէյ 1 ռ.
40 կ., հիանալի ՄՕՆԻԿ թէյ 1 ռ. 60 կ.
այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ռ.—2 ռ.
50 կ., զեղեցիկ ԿԱՑԱՌԻ թէյ 1 ռ. 80 կ.
և ամենալաւ ֆուլ-չու-ֆու թէյ 2 ռ. մա-
քուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովոր-
աբար լինում են 500 երկամսե ՄԱՀԱՎԱԼ-
ՆԵՐ 6 ռ.—60 ռ., երկամսե ԳՐԻՉՆԵՐ մա-
քուր Անդրիովի համար, շօհրադ Ֆրայ,
Շեփերդ ԳԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿ-
ՄԱՍՏԵՐ մաքուր համար, հրացաններ ԳԱՌԻ,
ԲԷՎՈՎԵՐՆԵՐ վերքի, ՔԱՄԲԵՐ բարներին,
ԿՕՐԻՆԻ ՆՂՂՂՂՂ, ԱԼԲՈՒՆԵՐ Շփարցի կէս
գնով: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ,
ԹԻՖԼԻՍԻ ՄԷՉ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԳԱԼԼԵՐԵՑՈՒՄ № 156, 157, 158,
159 և 100:

Վ. ՇԱՎԵՐԴԵԱՆԻ ԼՐԱ-
ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒ-
ԹԵԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:

(Գ. Օլովինսկի պրոսպեկտ, Ալեք-
սանդրեան պարտէզի մօտ).

ԲԱՅԱՆՈՐԳԱԳՐՈՒՄ ԵՆ Թէ տեղա-
կան, թէ Ռուսաստանի և թէ արտա-
սահմանեան բոլոր պարբերական հրա-
տարակութիւններին 1883 տարուայ
համար:

8—10

Տրվում է վարձով մի լցյ սենսակ
մեքերով, վառեկափայտով, սամովարով
և ծառայով, ամսական 12 ռուբլով:
Կուկիայում, Խարյովսկայա փողոց, տուն
№ 9, ներքին յարկում:
ОТДАЕТСЯ одна свѣтлая КОМ-
НАТА съ мебелью, отоплениемъ,
самоваромъ и прислугою за 12
р. въ мѣсяцъ. Куки, Исарлов-
ская улица, домъ № 9, нижній
этажъ.

7—10

Լցյ տեսաւ մանկավարժական «ՎԱՐՋԱՐԱՆ» ամսագրի № 4.

Բովանդակութիւն: Փ. Վարդանեան.—Սպեկտրի մանկավարժական մեքերը (Հարունա-
կու թիւն): Յ. Չիգրանեան.—Տնարարութեան ուսումնարաններ: Ա. Բաշաթեան.—Երկու օ-
րինակելի դաս սրբազան պատմութիւնից: Ս. Պալասանեան.—Ազգային պատմութիւնը
տարրական ուսումնարաններում (Հարունակութիւն): Ղ. Աղայեան.—Հարկաւոր է արգեթը
ը հնչիւնի օժանդակութիւնը զարգիտութիւն ուսուցանելիս: Այլ և այլք: Մանկական
բաժին, ա) Մանկական հեքիաթ, բ) Ղահվէ, գ) Թաղաւորի նոր զգեստը—Զուարճալիք,
Հանելուկներ, Խնդիրներ:—Յայտարարութիւններ:
«Վարժարանի» տարեկան գինն է հինգ ռ. տարին սխալում է օգոստոսից և տեւում
է մինչև յունիսը:
Ստորագրուել կարելի է խմբագրութեան գրասենեակում, պ. Կատարեանի խանու-
թում և Վ. Շահվերդեանի պալիլիսում:

Մ Ի Չ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ Օ Լ Ի չ Ե ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ան կ Ի Է Ն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆԱՅԻ ՄԵՐԵԼ ամե-
նայն տեսակ, Ֆրանսիական և անգլիական երկամսե ԿՐԱՎԱՅԵՐ 8—30 ռ., չա-
մաղաններ 250—25 ռ., սակիջածներ 1. 30—12 ռ., սոււնդուկներ Դա-
նասարգի 6—35 ռ., մարաններ (поробцы) 6—25 ռ., սա մօ վաւրներ 60
կ.—1.25 ֆունտը, կուկանի պինձե ամաններ, Գերմանիայի երկամսե էմալով
ամաններ, ու մի վալյունի կ'ն եր մրա մօ ռնի 38 ռ.—75 ռ., հրացաններ
երկու լույսին 6—32 ռ., ա է վոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30
ռ., պատրաններ (գուլաններ) ընթացիկ, սիգար Ռէնդարդի Ֆարրիկից պապի-
րուս և թամբալու կուլաններով գելիկ պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՑ (չայ) ԵՂ.
ՊԱՊՈՎՆԵՐԻ, Բիսկիտ. (սուլոր չայու և կաֆէի) Լինէմի. կօֆէ Լինէմի և
Միլիթանի. Պետերբուրգում 40—1 ռ. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ
28 կ.—240 ռ., պրոբկայ գինեկաճանների, հանրային և գարնջի (для
зельтерскихъ водъ и пива) ղոյթուկ (пучкъ), պարաններ սամովարի և
չայու, դանակ չանդալ զանազան ֆարրիկաների 1 ռ. 20 կ.—25 ռ. դուժինը.
գրչակներ 1 ռ. 80 կ.—50—60 կ. դանակ ջրի 1—60 կ.—12 ռ., դա-
նակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուկանի 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր-
միս կարելու մաշինայ. Անգլիական ութներ, Բրիտանական չայնիկներ, կաֆէի-
նիկներ ամենայն տեսակ, Չաղաներ կաֆէի համար, Ֆիլտրեր—Չուր մաքրելու,
կրակամալ կարթիկէն 18 կ., վաքա Ֆրանսիայի ծախցի, թուղթ փոշաի, կանկար-
ներ, սուրճուչ, մատիտ, գրէչ երկամսե, գրչակոթ, քարտատեսակ, թանաք,
թանաքամաններ, պրեսպապիկներ, զգալներ սեղանի և չայու ֆրաժե, վարչակի
և բրիտանական դուժինը 1—50 կ. մինչև 12 ռ., և չայու 45 կ.—5 ռ., չու-
միչէք 45 կ.—5 ռ., շամաղաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. Չուխտ, պղ-
սապղաններ վարչակու, Ռեզիտի ԿԱՌՇԵՐ, ամեն տեսակ, գուլաններ կա-
նանց և մարդիկանց 15 կ.—50 կ. Չուխտ, շաղիկներ, մարդիկանց զարու-
տիկներ, գնախիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրեկի և շքի. սանդղեր շիր-
մայու ոսկորէ, գուսապերչովի և փայտէ, շուսկաներ գլխի, շորի, սապակի, պոյի և
կարտի համար. չուլթի թէյ (сумага) մատուի կօճի և շալէ (гарусъ) Ֆէլ-
չաակէք մարդիկանց և կանանց, պորամաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ
և մանր գոլանտերիսի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.—30 կ.,
կտոր, հոտավէտ ջրեր, պուրա, Գլիցերին ջրի քաղախ, հոտավէտ պարաշոկներ
ԿԻԼԵՐԻ ԼԱՐՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցիլեալ ապ-
րանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՐԱՅԻՆ ՏԵՐ ՆԻԿՈՂՈ-
ՍԵԱՆՅԻ պահեստում. (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի ան-
կիւնում № 13.

Օտարապաղարացիք կարող են գիմել հետևեալ հասցեով. Тифлисъ Ми-
хайлу Н. Теръ-Никогосову.

177—180

Մ Ի Չ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ Օ Լ Ի չ Ե ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ան կ Ի Է Ն № 13.

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎ ԵԼ ՎԻԷՆԱՅՈՒՄ

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:

«Ժուրնալ դ'Օրիան» լրագրի հին բաժանորդներին զազարեցրած թերթի տեղ
կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:

«L'Oriental» թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ:
Գրվել կարելի է «ՄՇԱԿԻ» խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիենայում գիմե-
լով հետևալ հասարակ հասցեով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.